Արձանագրություն N 3
ՀԱՊԱԿ-ԳՀԾՁԲ-20/5 ծածկագրով էլեկտրոնային գնումների Armeps (www.armeps.am) համակարգի միջոցով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի արտահերթ նիստի

Ք. Երևան 04 օգոստոսի 2020թ.
Ժամը՝ 15:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Հակոբյան
Հանձնաժողով.
Գնահատող անդամներ՝ Գ. Թադևոսյան, Մ. Ուստյան
Բացող անդամներ՝ Ա. Գյուրջյան , Ա. Ներսիսյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Է. Գրիգորյան

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը
(Ա. Հակոբյան)

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.
1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին,
2. ՀԱՊԱԿ-ԳՀԾՁԲ-20/5 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը օրենքով սահմանված կարգով չեղարկելու մասին :
3. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0

2. ՀԱՊԱԿ-ԳՀԾՁԲ-20/5 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը օրենքով սահմանված կարգով չեղարկելու մասին
(Ա. Հակոբյան)

<<ՀՈԳԵԿԱՆ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ>> ՓԲԸ-ի կողմից 2020թ.-ի հուլիսի 21-ին հայտարարված ՀԱՊԱԿ-ԳՀԾՁԲ-20/5 ծածկագրով ՀՀ ԱՆ «Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար անհրաժեշտ աշխատանքային արվեստի թերապիայի ծառայությունների ձեռքբերման գնման ընթացակարգի արդյունքում հաղթող մասնակից է ճանաչվել Աութսորս ՍՊԸ-ն, որի հետ պայմանագիրը պետք է կնքվի օգոստոսի 06-ին: Սակայն օգոստոսի 04-ի դրությամբ հիվանդների մոտ կորոնավիրուսի բռնկում է արձանագրվել, ինչը անհնարին է դարձել աշխատանքային արվեստի թերապիայի ծառայությունների մատուցումը:

Վերոգրյալով պայմանավորված անհրաժեշտություն է առաջացել գնման ընթացակարգը չկայացած հայտարարել համաձայն <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ դադարել է գոյություն ունենալ գնման պահանջը, ուստի հանձնաժողովը որոշեց.

Համաձայն ՀԱՊԱԿ-ԳՀԾՁԲ-20/5 ծածկագրով հրավերի 11-րդ կետի 1-ին մասի 2-րդ պարբերության և ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգի 58-րդ կետի գրավոր դիմել առողջապահության նախարարություն, գնման ընթացակարգը չեղարկելու թույլատվություն ստանալու ակնկալիքով:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

3.Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին
(Ա. Հակոբյան)

ՀԱՊԱԿ-ԳՀԾՁԲ-20/5 ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով գնանշման հարցման ընթացակարգի հաջորդ նիստ հրավիրել առողջապահության նախարարության կողմից ընդունված որոշման ստացման օրվան հաջորդող օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում <<Հոգեկան առողջության պահպանման ազգային կենտրոն>> ՓԲԸ, Ք. Երևան, Նուբարաշեն 1/3 հասցեում:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0

Հանձնաժողովի	Ա. Հակոբյան
Նախագահ՝	Գ. Թադևոսյան
	Ս. Ուստյան
անդամներ՝	Ա. Գյուրջյան
	Ա. Ներսիսյան
Քարտուղար՝	Է. Գրիգորյան